



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5. Անիս-Գրիգորյան

Գալոս

1891թ.

Կապ

904

921

556

12011

Фотия



ՍԱՐՍԱՓԵԼԻ

ԻՐՈՂՈՒԹԻՒՆ



(ԲԵՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆԻ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ



1891

Է. ՏԷՐ-ԳՐԻԳՐԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ:

Ե Ր Ե Ւ Ա Ն

Дозволено Цензурою. Тифлисъ 21 Мая
1891 года.




92-1-2044

18901

ՍԱՐՍԱՓԵԼԻ

ԻՐԱՂՈՒԹԻՒՆ



18** Թուականն էր. ամառուայ սկիզբը:
Գիշեր էր...

Անկողնումն պառկած՝ մի տեսակ անորոշ,
մտքամոլոր դրութեան մէջ էի... Մի քանի
րոպէում կուտակուեցան գլխումըս զանազան
մտքեր և այդ մտքերը ստեղծեցին իմ մէջ
այնպիսի հանգամանքներ, որոնք աչքի առաջ
ունենալուց յետոյ՝ անհնարին էր ինձ համար՝
չգնալ Ռուսիայի մայրաքաղաքներից մէկը:

Ընտանիքս ու ծնօղներս միանգամայն հա-
կառակուեցին մտադրութեանս, առանց հաշիւ
տալու իրենց դորա պատճառը: Նոքա, կարծես,
զգում էին մի սարսափելի փոթորիկ, մի անբա-
ցադրելի թշուառութիւն այս ճանապարհիս
վերայ...

Եւ դորանց հակառակութեանը, ի հարկ է, ոչ մի նշանակութիւն չտուեցի ես, որովհետեւ նա հիմնուած էր մի միայն զգացմունքների վերայ:

Աւելի աժանութեան համար հարկաւոր էր ինձ ճանապարհի մի կամ երկու ընկեր գտնել և այդ շատ շուտով յաջողեց ինձ. ընկերս էր մէկ օֆիցեր, որը ուղարկվում էր ծառայութեան գործով Տփլիս:

Անհրաժեշտ է մի փոքր ծանօթացնել Ձեզ այդ օֆիցերի հետ. դորա ազգանունն էր Սինկով և եթէ թարգմանենք՝ կլինի՝ Կապուտեանց կամ աւելի ճիշտ՝ Լեղակեանց: Նորա երեսի դէմքը բոլորովին համապատասխան չէր իւր ազգանուն. վերցրէք, լաւ լուացէք մի մեծ լաբլաբու (бываку, бабака) և դուք կը տեսնէք նորա պատկերը, իսկ երբ նա մի փոքր խմում էր—դուք կ'գտնէիք նորա երեսին ծիածանի բոլոր գոյները. և կանաչ, և կարմիր, և դեղին, և մանուշակագոյն (багряна) ... մի խօսքով բացի մարմնի գոյնը՝ ամեն գոյն: Բնութիւնով նա շատ արիասիրտ էր. կամքով՝ վճռողական, իսկ ծառայութիւնով՝ քաջ զինուոր:

Այդ պարոնի և իւր ծառայ զինուորի, կամ աւելի պարզ ասենք՝ դէնչիկի, հետ նստեցինք փոստի սայլակը և ընկանք ճանապարհ:

Սուխոյ—Ֆանտան իջեանից դուրս եկած ժամանակներս պատահեց մի թեթեւ անցք, որը

ոչ պահաս վրդովեցրեց մեզ. պ. Սինկովը նկատեց որ իմ կապոցքը, ուր գտնվում էին շորերս և մի վերմակ՝ չկայ. իսկոյն պահանջեցինք սայլապանից դառնալ իջեան, բայց նա ուշ չգարձրեց և շարունակեց իւր ճանապարհը. տեսնելով այդ՝ Սինկովը բարկացաւ և հրացանի դոնդաղով այնպէս խբեց նորա մէջքին, որ քիչ էր մնում վայր ընկնէր սայլից:

Սայլապանը զգաց որ հետը հանաք չեն աւնում, որ բանը բուրդ էր... այնու ամենայնիւ չկարողացաւ տանել դոնդաղի հարուածը. ձիերին յանկարծ այնպէս պտտեց, որ սայլակը շուռ եկաւ և մեզ գլորեց գետին: Առաջ Սինկովը վայր ընկաւ և յետոյ ես՝ նորա վերայ—բայց անվնաս վեր կացանք:

Սինկովը և դէնչիկը թափեցին սայլապանի վերայ և „զորըս դու պատուիրեցէր“... ես էլ ընկերութիւնից յետ չէի մնում... մի լաւ ծեծելուց յետոյ կրկին նստեցինք սայլը և դարձանք իջեան, ուր գտնելով թուրած կապոցք՝ նորէն ընկանք ճանապարհ, փոխելով սայլապանին:

Կարծես բնութեան օրէնք է. երբ մի մարդ անյաջողութեան է պատահում, դորանով չի վերջանում. աւելի վատթար անյաջողութիւններ հետեւում են նորան, երեքպատկվում է, չորէքպատկվում է և, մինչև անգամ, այն տե-

ղըն է համոռն, որ մարդ թէ բարոյապէս և թէ ֆիզիքապէս ընկնում է...

Այդպէս պատահեց և մեզ հետ...

Ելէնովկայից դուրս գալով, ընկանք ճանապարհ: Գուցէ ձեզանից շատերը կ'իշեն, որ իջեանից չորս հինգ վերստ հեռու, ծովեզրեայ ճանապարհը բարձրանում է և յետոյ մի փոքր իջնելով թեթև պտոյտ է անում, ուր շինուած է էտապի համար տուն. այդտեղ հողը հեղհեղ է իջնելով միանում է Ծովի (Աւանայ լիճն է, որ Կէղայի և Աւանայ Զով եւ անտանո՞ճ) ջրի հետ, ուր մինչև անգամ ցանքեր էլ կան: Այդտեղ, մի փոքր հեռու ասածս տանից, ձիանքը յանկարծ ֆռթնացնելով կանգնեցին մի քարի մօտ, բայց կատաղեցին այն ժամանակ, երբ մի նապաստակ, դուրս պրծնելով քարի տակից, նորանց առաջից փախաւ դէպի վեր — սարը: Ձիանքը գլուխ առան և մեզ ցանքերի միջով տարան դէպի ծովը:

Սինկովի դէնչչիկը իրան գցեց ցած և ոտը վնասեց, սայլապանն էլ միւս կողմից. — մնացինք ես և Սինկովը սայլի վերայ: Ընկերս էլ այն ժամանակ կարողացաւ դուրս ընկնել սայլից, երբ արդէն ափից 3—4 արշին Ծովի ջրի մէջն էինք:

Ես բոլորովին շփոթուած՝ մնացել էի անշարժ... և յանկարծ ձրերը, որոնց միայն գը-

լուիններն էին երևում ջրի մ'ջից, իսկոյն շուռ եկան և իրանց գցեցին ջրից դուրս. և այդ րոպէական պտոյտի ժամանակ սայլակը շուռ գալով, ինձ գցեց ջուրը...

Բարեբաղբաբար մեզանից կէս վերստաչափ հեռաւորութեան մէջ ձկնորս մալիանները թռերով ձուկն էին բռնում: Սինկովը, երբ կարողացաւ, որպէս լողորդ, դուրս գալ ջրից՝ տեսաւ ինձ անյայտացած՝ իսկոյն սկսեց գոռալ և օգնութեան կանչել մալիաններին. դորա հետ միացան և դէնչչիկը և սայլապանը...

Սալիկանները շուտով հասան:

Ես լող տալ չգիտեմ. դուք երեւակայեցէք իմ դրութիւնս. շորերով... ջրի մէջ... 40, 50 արշնաչափ եզրից հեռու... Ես շատ էի աշխատում ինձ դուրս գցել, բայց այդ չէր յաջողում ինձ... մի կողմից թռչուած շորերիս ծանրութիւնը, միւս կողմից լողանալ չիմանալս, ջրի անյատակ խորութիւնը — ինձ դէպի կորուստն էր տանում... խորասուզվում էի... շունչս կտրվում էր... աչքերս սևանում էին... սիրտս սաստիկ բաբախում էր: Ես զգում էի, որ զորութիւնից ընկնում եմ... հեղհեղ թուլանում էի... և, կարծես թէ, ուշս գնում էր... ես ինձ մոռանում էի...

Շատ տեւեց իմ այդ դրութիւնը թէ ոչ՝ չգիտեմ, բայց համարեա անշնչացած դրութեան

մէջ էի ես, որ զգացի մի թեթե ծանրութիւն գլխովս գիպչելը և ինձ կալած կապկապուած ինչ որ ցանցանման կենդանիով... ձեռքերս, իրր, գցեցի և բռնուեցի ինձ շրջապատող թելերից... բայց, կարծես, ինձ այդ ջրային կենդանին տանում էր խոր, շատ խոր, կարծես ծովի յատակն էր իջեցնում ինձ... և այդպիսով իմ գոյութիւնս վերջացած էր համարվում...

Յանկարծ... սիրտս սկսեց նորէն բարախել... զգայութիւնս նորոգուեց... արեգական ճառագայթները աչքերս ծակեցին... մարդկային ձայներն ինձ շրջապատեցին... իմ գոյութեանս յոյսը կարծես վերականգնեց... բայց անիրաւ ջրային հրէշը ինձնից չէր հեռանում... նա փաթաթել էր ինձ ոտից մինչի գլուխ իւր թելանման ցանցի մէջ...

„Вотъ рыба, такъ рыба, я вамъ скажу“, լսուեց ականջիս մի անծանօթի ձայնով և բուռն ծիծաղով մի քանի երկաթեայ ձեռքեր, ինձ, թշուառիս, բռնեցին և գցեցին մի չոր տեղ... և ապա ազատեցին ինձ այն հրէշի թելանման վանդակից... և դուրս հանեցին ամբար:

Այդ ծովային հրէշը—մալական ձկնորսների թոռն էր:

Ես շատ լաւ յիշում եմ թէ ինչպէս շորերըս հանեցին, փոխեցին, տաք վերմակիս մէջ փաթաթեցին և նստեցրին սայլակը: Մի քանի

վերստ չգնացած ես, համարեա թէ, ինձ լաւ էի զգում: Բայց երբ աչքովս էր ընկնում ծովի կապուտակը—սարսափում էի... Դեռ մինչև այսօր էլ մի որ և է գետ կամ լճակ տեսնելիս՝ նոյն սարսափը տարածվում է ամբողջ մարմնիս, զգայարանքներիս վերայ:

Արդէն արեւը մայր մտնելու վերայ էր, որ մենք հասանք Սէմիօնովկայ-իջևանը:

Այդտեղ պատրաստ ինքնաեռ պահանջեցինք, մի երկու բիւմկայ լաւ կօնիակ խմեցինք. շուտով, թէյ և մի լաւ կեր ու խում անելուց յետոյ այնպէս լաւացայ, որ կարծես թէ մեզ հետ ոչինչ չէր պատահել:

Սինկօվը կանչեց իջևանի վերակացուին, և յանձնելով նորան ոսծորոձեռն, պատուիրեց շուտով լծել ձիանքը:

Վերակացուն խնդրեց մեզ այդ գիշեր մնալու իջևանում: Որովհետեւ, ինչպէս ասաց նա, մի քանի աւազակներ են պտտում Դիլիջանի սարերում և միանգամայն երկիւղալի էր դառել ճանապարհը, բայց Սինկօվը չհամաձայնեց մնալ: Ես էլ միւս կողմից խնդրեցի գիշերել Սէմիօնովկայում, բայց հնար չեղաւ: Բանը այնտեղ հասաւ, որ ես վճռեցի մնալ, իսկ ինքը ուր ուզում է գնայ:

Կէս ժամից յետոյ ձիանքը պատրաստ էին և վերակացուն, յայտնելով այդ մասին, վերա-

դարձրեց Սինկովին պաղարօժնան:

Այստեղ յիշեցի, որ ես մնալ չեմ կարող, որովհետեւ պաղարօժնայ չունէի. ուստի և կամայ—ականայ ստիպուեցի հնազանդել ճակատագրիս և հետեւել Սինկովին:

Գիւղիջանի օձապտոյտ և անտառախիտ ճանապարհով իջնում ենք: Երկնային լապտերը—լուսնեակը լուսաւորում է մեր ճանապարհը: Ո՛չ մի տեղից ձայն, մարդկային նշան չէ երևում: Գիշերուայ ժամի 11-ին կէս կուգէր:

Մենք անվրդով շարունակում ենք մեր ճանապարհը: Եթէ մէկ բան խանգարում էր գիշերային համառ լռութիւնը—այդ միայն մեր սայլակի միատեսակ և ձանձրացուցիչ զանգակի ղողանջիւնն էր:

Իմ առաջ նստած գէնշչիկը շուտ շուտ գլուխ էր տալիս օդին և ծառերին. դորան ոչ պակաս հետեւում էր և իւր աղան—Սինկովը, նոյնպէս շուտ շուտ գլուխ տալով սայլապանի մէջքին: Ես էլ ժամանակ առ ժամանակ բնկերութիւնից յետ չէի մնում:

Ամենքս էլ այդ անվրդով գրութեան մէջ էինք, երբ յանկարծ լսուեց «դ-ո՛ւր» բառը և ձիանը կանգնեցին...

Ով որ անցել է այդ ճանապարհով, անշուշտ կ'իշխի՝ Սիմիօնովկայից մօտ 6—7 վերստ

ցած, կամ էտապի տանից 3—4 վերստ բարձր՝ ճանապարհի լայն և ընդարձակ պտոյտը: Տեղը անտառախիտ է. այդ իսկ պտոյտից դէպի աջ՝ բարձրանում է մի նեղ ճանապարհ և ապա իջնում է լեռան միւս երեսը:

Ձիանը կանգնեցին հէնց այդ պտոյտի վերայ. աչքերս բարձրացրի և տեսայ չորս ձիաւորների կանգնած մեր սայլակի առաջ:

Լուսինը անցնելով ստուերախիտ ծառերի միջից, լուսաւորում էր Սինկովին, գէնշչիկին և սայլապանին. իսկ ես չէի երևում, որովհետեւ այն թանձր ծառերի ստուերը իմ վերայ էր. ես մթութեան մէջն էի:

—Արձակիր ձիանդ և հեռացիր, ասաց թուրք աւաղակներից մէկը մեր սայլապանին:

Մէկ րոպէում սայլապանը արձակեց ձիանքը, քաշեց, տարաւ և հեռացաւ: Մենք մնացինք դատարկ սայլի վերայ:

—Это что такое? քուներ գլխին վեր թռաւ Սինկովը:

—Разбойники Вашескорodie, պատասխանեց գէնշչիկը և պատրաստեց հրացանը:

—Пали!! հրամայեց առաջինը և ինքը հանեց րէվօլվերը:

Աւաղակներից երկուսը վրայ պրծան մեղ վերայ սրերով, որպէս ղի «կարճ կտրեն», չթողնեն հրացանի ձայն դուրս գայ, բայց գէնշչիկի հրա-

ցանը հասաւ իւր նպատակին և թուրքերից մէկը գլորուեց ձիուց. մինչ այդ՝ երկրորդ թուրքը հասաւ և թրի մի սաստիկ հարուածով երկու մաս բաժանեց ողորմելի դէնչիկին. սուրը կտրել էր ձախ կողմից սկսած՝ վիզը և դուրս էր եկել աջու կռնատակից: Նորա արիւնը ուժեղ շատրուանի նման դուրս ցայտկեց կիսուած մարմնից և մի ակնթարթում ողողեց մեղ...

Սինկօլը կատաղեց... րէվօլվէրը արձակեց այդ թուրքի վերայ... գնդակը ջնջխեց նորա գլուխը. թուրքը, ի հարկէ վայր ընկաւ ձիուց:

Տեսնելով այս՝ միւս երկու աւազակները փախան դէպի աջ նեղ ճանապարհով, բայց երկուրոպէ չանցած մի 50 քայլ վերեւ, տեսնեց ևս հինգ ձիաւորների, որոնք գալիս էին օգնութիւն հասնելու աւազակներին... Մեզանից՝ երկու փախչող աւազակները դարձան նոր ոյժով մեղ վերայ և յանկարծ...

Եւ առհասարակ այսպիսի ժամանակներում չես վախենում, միայն սիրտս է սկսում դողալ և թուքս կպչել: Միայն այնքան կարողացայ անել որ աջու կողմիս կախած պոյուսակս, որի մէջ գտնվում էր և փողս և մի քանի թանգագին բաներ, գցեցի մօտակայ թիւերի մէջ և ինքս սկսեցի դողմանի դիպչել...

— Что вы трясите? ասաց Սինկօլը կամե-

նալով սիրտ տալ ինձ — будьте молодцом! աւելացրեց նա:

— Я то не трусь, а боюсь только, պատասխանեցի ես և ատամներս ջրաղացի չխչխկանի պէս չխչկոցը գցեցին: Այնքան ոյժ ունեցայ ես՝ որ հանեցի րէվօլվէրս և բռնեցի ձեռքումըս պատրաստի:

...և յանկարծ՝ տղզզ... իմ ականջիս տակով անցաւ թուրքերի գնդակը:

— Արձակեցէք ձեր րէվօլվէրը, ասաց կատաղած Սինկօլը և ինքը մէկ... երկու... տրախտրախկացրեց աւազակների վերայ, որոնք, կարծես ապշած, մի քանի վայրկեան կանգ առան և նոցա կողմից «վա՛յ, օլդրմ, օլդրմ»-ի հետ լսուեց մի ինչ խուլ դրմիոց:

Նոցանից մէկը վայր ընկաւ իւր նոյգից:

— Да стреляйте же Бога ради, հազիւ զրուպելով իւր բարկութիւնը, ասաց Սինկօլը և իսկոյն արձակեց մի գնդակ էլ:

Եւ շատ էի աշխատում կրակելու ձեռքիս րէվօլվէրը, բայց ինձ չէր յաջողում այդ... մի քանի փորձերից յետոյ միայն՝ կարողացայ հասկանալ բանի էութիւնը. րէվօլվէրը չէր էլ կարող բացուել, որովհետեւ ես բռնել էի նորա լուլիցը, այն էլ հակառակ կողմից, իսկ եթէ բացուելու էլ լինէր՝ անշուշտ իմ գնդակը պիտի կուրծքիցս մտնէր, և գուցէ, դուրս գար մէջքիցս:

— ԹՄԻՆ՝ ԵՄՄԱ ԵՄՄԱ, ԵՄՄԱ, ԵՄՄԱ՜! առաջ յուսահատ Սինկովը և արձակեց երկու գնդակ էլ իւր ըէփովէրէից, իսկ միւս ձեռքով խելեց ձեռքիցս իմս:

Լսուեց մի յուսահատ աղմուկ աւազակների կողմից և չորս, հինգ հրացանի գնդակներ տոժաղին մեր չորս կողմը:

Սինկովս սայլակից վայր ընկաւ... Աւազակների գնդակներից մէկը ջարդել էր նորա աջու ուսը:

Ես զրկուեցի վերջին պաշտպանիցս... սարսափելի պատկերներ նկարուեցան առաջիս... արի՛ւն... անխնայ արիւն էր հոսում այդ պատկերների մէջ...

Ես կամաց... կրիայի պէս... սողացի և մըտայ սայլակի ներսը, խոտերի մէջ: Գլուխս, կաքաւի պէս, ծածկեցի խոտով, կարծելով թէ էլ ինձ ոչ ոք չի տեսնիլ և... ինձ այնուհետեւ չէի յիշում:

Նստ անցաւ թէ քիչ—միտս չէր. միայն այնքանն եմ յիշում, որ ձեռքերս միջքիցս կապած աւազակների մէկի ձիու ետեւից գերիի, կամ աւելի պարզ ասենք, ոչխարի պէս քաշվում, գնում էի...

Նոյնպէս յիշում եմ, որ նոքա բարձրացան ասածս աջակողմեան նեղ, ծառախիտ ու ծուռումուռ ճանապարհով և յետոյ... իջան մի

ինչ նոյնպէս անտառախիտ ձոր, որ ես կարծում եմ, բազմաթիւ ճանապարհորդներից՝ ոչ ոքին վիճակուած չի եղել տեսնելու...

Աւազակները յաղթում էին արջի ճարպիկութեամբ շատ արգելքների, որովհետեւ, ինչպէս ասացի, մենք շրջապատուած էինք դարաւոր ծառերով, անանցնելի թփերով և տեղ տեղ ապառաժի թէ ահագին և թէ մանր մուշկ կրտորներով, և, վերջապէս, մի քանի անգամ խըրվում էինք առուակներից կազմուած բաւական խոր ճահիճների կամ տլերի մէջ...

Վերջապէս կանգնեցինք. գիշերուայ ժամի 1-ը կլինէր. իջան ձիերից: Կայծակի արագութեամբ քրքրեցին մեր բանումանը և, ի հարկէ, մեր ունեցածը չարչարանքին չարժէր, չեմ ասում արիւնհեղութեան. միայն Սինկովի պայուսակում գտան մի փաթեթ. ճղճղեցին երեսի թուղթը և տեսան—փող... Լուռ նայեցին իրար և այդ նայուածքից երեւաց մի շնչին բաւականութիւն:

— Բա՛լա, ասաց նորանցից մէկը. էդ դովշանին (նապաստակին) բաւական է ինչքան քաշ տուինք. տար, դրա հետ վերջացրու և շուտով արի՛. էգուց ճաշին Ալագեազի սարերում պիտի լինենք:

Վեր կացաւ տեղից մի ահռելի գազան... հեգնորէն՝ նայեց վերաս... բաց արեց ձեռքերիս պարանը և շարտեց ընկերներին՝

— Էս մեզ պէտք կգայ:

Ես փորձեցի ազատութիւն աղերսել, բայց այնպէս տուեց կուրծքիս բռունցքով, որ մէջքիս վերայ վայր ընկայ... Իսկոյն կռացաւ, բռնեց մի ձեռքով ձախ կռնիցս և, ինչպէս մի հաւի ճուտ, տարաւ ինձ... հեռացրեց...

— Կանգնիր, ասաց մի հարիւր քայլ հեռանալուց յետոյ:

Ես մեքենայաբար կանգնեցի... Հանեց բռնից խանչալը, նայեց և փորձեց թէ որքան սուր էր... Լուսնի պայծառ լոյսը վառուեց խանչալի վերայ, որից արտացոլած լոյսը ընկաւ աչքերիս:

Աչքերս մթնեցին... ուղեղս խառնուեց... սարսուռն ու դողը բռնեց ամբողջ մարմինս... սառը քրտինքը հեղեղի պէս թռջեց շորերս... Ինձ թւաց թէ ես դարձեալ ծովի մէջն եմ... կարծես, կաշկանդուած, սղմուած նոյն ջրային հրէշով, ես իջնում եմ խոր, շա՛տ խոր...

Սրտիս սաստիկ բաբախումը նորէն արթնացրեց ինձ:

— Ի սէր Ալլահի, գոռացի ես, չոքելով անգութ դահճիս առաջ, խղճ'ա ինձ... ինչի՞դ է պէտք իմ արիւնս:

— Տօ դէ ձէնդ կտրի է՛, ասաց արհամարհանքով և կատաղութեամբ Բաջաբը և... բարձրացրեց խանչալը...

Տժժժժ... Բժժժժ... Տժժժժ... Բժժժժ... լսուեցան տասնաւոր հրացանների ձայներ և խառնաշփոթ աղաղակներ աւազակների կողմից:

Բաջաբի թւերը կարծես թուլացան, կարծես նա շշմեց... Ազատութեանս յոյսը հրացանի գնտակով աւետուեց ինձ...

Բայց յանկարծ... գազանի կատաղութեամբ նորէն բարձրացրեց խանչալը և...

Վերջին յուսահատութիւնը ցնցեց իմ բոլոր ջղերս ու երակներս և ես վեր թռայ տեղիցս... զարթնեցի...

Գիշերուայ ժամի 4-ը կլինէր...

Ո՞վ է կարող երեւակոյել իմ ուրախութիւնըս, երբ գտայ ինձ՝ իմ պատսպարող հարկիս տակ, իմ տանս մէջ, իմ ընտանեացս, իմ որդոց մօտ... երբ միանգամայն ազատ դգացի ինձ անօրէն Բաջաբի գլխիս վերայ բարձրացրած՝ դաշոյնից... երբ, վերջապէս, համոզուեցի, որ այս բոլորը ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ մի սարսափելի երազ...


— Փառք քեզ Տէր, փառք քեզ... մրմնջացին շրթունքներս և գոհութեանս աղօթքը վեր առաքեցի մեր Ստեղծողին:

ՎԵՐՋ



924-2044

... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...



... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...
 ... 1844 ... 1844 ... 1844 ...

ՀՀ Ազգային գրադարան



NL0666934

ՀՀ Ազգային գրադարան



NL0666933

